ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«04» 10 2012թ.
171

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎԱԲԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնական հանդիպումների ընթացքում տրվող հյուրասիրությունները կազմակերպվում են օտարերկրյա պատվիրակությունների Հայաստանի Հանրապետություն այցերի արարողակարգով նախատեսվող միջոցառումների շրջանակներում, ՀՀ կառավարության 10.09.2009թ. N 1036-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների համապատասխան /1 անձի համար 12.500 դրամ/:

Հյուրասիրություններն իրականացվում են ՀՀ տարածքում գործող, սննդի ծառայություն մատուցող հաստատություններում, իսկ ծառայությունը ձեռք է բերվում մեկ անձից գնում կատարելու ձևով, համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման:

Հյուրասիրության ծառայություն տրամադրող հաստատության կողմից վճարման ներկայացվող հաշիվներում չի իրականացվում ուտեստների և խմիչքների տարանջատում /օրենսդրությունը նմանատիպ պահանջ չի նախատեսում/ հյուրասիրությունը դիտարկվում է ընդհանուր 1 միավորի /անձ/ համատեքստում:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՂԵԿԱՎԱՐ

/ գնդապետ Դ.ԲԵՆԳԼՅԱՆ

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374) 10 29-44-01, Ֆաքս (+374) 10 29-43-12